



ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Père G. Kalémkarian Meehitaristengasse
Nr 4 Vienne

ԲԱՏԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արսասահմանի համար (երկու քիւր մեկ
ծարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵՐ

Համակ դրամ առաջին դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պուշկարիա)
Редакция на вѣст.
ИРЯВУНЬ
ВАРНА (България).
Rédaction du journal
„Irayounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դատաւար-
ները միայն կը հրատարակուին աւ-
տոյնովին կամ մասամբ:
Մանուցման տողը 20 սանթիմ. երե-
ւոյն մէջէն սկսած յետոյ համար 20 օր
գեղը կը լինի:

ՅԱՆՑԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Ստուգել, շատ վտանգաւոր չը-
լանի մը մէջ մտած ենք կոտորածնե-
րէն ի վեր: Բռնապետութիւնը իր
հալածանքներով, կողոպուտներով
և հրձիգութիւններով այնքան դը-
ժուարին կացութեան մը ենթար-
կեց մեզ, որ անել կերեւայ մեզ
այն ու մեր շուարածութեան մէջ
անկարող դարձնել ենք հետեւելի
բանաւորութիւնները մը լորտնելու և
գտնելու: Ամենքս կըզգայինք որ
պէտք է, անհրաժեշտագէտ պէտք
է մեզի նոր ճամբայ մը, նոր մի-
ջոցներ, համապատասխանող մեր
արդի կացութեան պահանջներուն:
Սակայն ո՞վ և ի՞նչ կերպով պիտի
փնտռէ ու ցոյց տայ մեզի պէտք
եղածը: Իր կոչումին ճշմարտա-
պէս գիտակից մամուլ մը իր լուսա-
ւորող առաջնորդութեամբ ամենա-
մեծ դեր մը պիտի կատարէր այս
մասին: Բայց հայ ազգոտ լրագ-
րութիւնը աւելի օգտակար և հեշտ
կը գտնէ սին բանապայքարներով
լեցնել իր սինակները, կամ, կու-
սակցական ակնոցով դիտել հան-
րային ամենէն կենսական խնդիր-
ները ու այնպէս ներկայացնել իր
ընթերցողներուն:

Եթէ լրագրութիւնը այս ըն-
թացքով դադարէր միայն օգտակար
ըլլալէ ազգ. դատին մէջ, այդ
այնքան ցաւալի չի պիտի ըլլար
որքան իրօք է այժմ, երբ այդ
մամլոյ կոչումները, ինչպէս քիչ
շատ դիտելու վարժ և հետաքրք-
քիր ամեն մտքի համար անհեր-
քելի է, ուղղակի և զգալի ֆլաս-
ները կարտագրեն՝ ժողովուրդին
վրայ անբարոյականացուցիչ տպա-
ւորութիւն գործելով:

Բաւականաչափ զարգացումէ և
ինքնուրոյն դատողութենէ զուրկ
դասակարգը, որ ամեն տեղ ժողո-
վուրդի մեծամասնութիւնը կը կազ-
մէ, հակառակորդ թերթերու մէջ
նորբուրդ գրական հայհուցներով
թխուած ամբաստանութիւններ,
կատաղի յարձակումներ կարգալով
և տեսնելով որ ինչ որ մէկ թեր-
թին մէջ տեւ գոյններով նկարուած
է, միւսին մէջ փայլուն ճերմա-

կութեամբ կը ներկայանայ, կը
շուարի, չգիտեր թէ ի՞նչ մտածէ,
ու վհատած իր առաջնորդներէ,
յուսահատ ազգ. դատին, նեղա-
ցած կը գոչէ

— Չգէ, ախպար, Աստուածդ
սիրես, այս ամէնքը հացի կու-
է. ոչ մէկուն խօսքին հաւատա-
լու չէ. բաւական է որքան մինչեւ
հիմա խաբուեցանք: Ս'եր ազգին
համար ալ բան մը ըլլալիք չի կայ,
գիտցած ըլլաւ. ինչեքնո՞ւս պէտք-
իչ պոչուղիք և ուղիքս պահալը:

Այն թերթիւրը որոնց կարգ մը
զրուածութիւնները այս սղարի ար-
դիւնքը կարտագրեն, ճիշդ իրենք
են դարձնալ որ ամենէն տեւի կը
գանգատին թէ ժողովուրդը ան-
տարբեր դարձած է ազգ. դատին
համար, թէ ա՛լ չի քաջալերի
գործիչները և թէ ազգին մէջ
ընդհանուր վհատութիւն մը կը
տիրէ որ կսպառնայ մահաբեր ըլ-
լալ մեզի:

Սակայն որո՞նք է յանցանքը:
Խմբագիրներու, կուսակցականե-
րու և գործիչներու մեծագոյն
պարտականութիւնը չէ՞ր՝ ժողո-
վուրդին գլխին թափած այն ան-
հուն աղէտներէն յետոյ, մոռնա-
նալով իրենց մէջ կեցած սկզբուն-
քի և կարծիքի տարբերութիւն-
ները, համբերալիաբար ճիշդ թու-
փել ամեն բանէ առաջ, կորով
ներշնչող, հաւատք արծարծող,
չինիչ գրութիւններով ժողովուրդին
ցաւերը սփոփելու և զայն հեռի պա-
հելու լքումէ և վհատութենէ:

Ասոր հակառակ այս վերջին
տարիներ հրապարակագրական ինչ
աղանդականութիւն մնաց որուն
հանդիսատես չըլլար ժողովուրդը,
եղծիքներու, խեղաթիւրումնե-
րու, սուտերու, հայհուցութիւննե-
րու ու դիւար բացարձակագէտ
հակասող լուրերու, իրարու տրա-
մագծագէտ հակառակ տեսու-
թիւններու անյատակ քառսի մը
մէջէն՝ ինչպէս կուզէք որ ելլէր ժո-
ղովուրդը, հոն սուտը իրաւէն,
օգտակարը ֆլասակարէն, մաքուրը
աղտոտէն զատելով, և իրեն բու-
նաւոր ճամբայ մը հարթելով, մա-
նաւանդ հայ ժողովուրդը որուն
մտային զարգացման մակարդակը

շատ վար է տակաւին և որ թուրք
բռնապետութեան ահագին հար-
ուածներէն ամբողջ մարմնով ցըն-
ցուած, շփոթած, պէտք ու-
նէր առաջնորդուելու արժանաւոր
ձեռքերէ:

Ու առաջնորդուելու, սակայն
դէպի այդ քառսը, որու տեսա-
լանը իրեն զգուսնք ու սոսկում
պատճառեց: Ժողովուրդը պաղե-
ցաւ, վհատեցաւ: Թանցանքը որուն
է:

Վաղարշակ

ՃԱՆՐԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Յաւալի է տեսնել տգէտ
մարդ մը, մանաւանդ երբ անիկայ
հանրային գործիչ մը, բահանայ
մը, խմբագիր մը, հազարարձու-
մը կամ ուսուցիչ մըն է: Իր տը-
գիտութեան իսկ անգիտակ այդ
արարածը եթէ զօրաւոր է իր
դիրքին կամ պաշտօնին մէջ, զըզ-
ուելի ինքնահաւան մը, անտա-
նելի ու քմահաճ բռնաւոր մը կը
հանդիսանայ: Իսկ եթէ կախում
մը ունի ուրիշներէն, եթէ իր շա-
հերու վտանգուելուն վախը կզգայ,
ա՛հ այն ատեն, անիկայ գետնա-
քարչ սողացող մը, անխիղճ զըր-
պարտող, աներես քծնող մը և
մութիւն մէջ դաւեր լարող նեն-
գաւոր մը կը դառնայ: Սկզբուն-
քի, ճշմարտութեան ու ազգասի-
րութեան քօղին տակ ի՞նչ անձ-
նական գծուծ հաշիւներ կը մաք-
րուին, ի՞նչ ստոր կրքեր կը յա-
գենան: Քահանան իբր հովիւի
կերպարանքով գալ իր հօտը կամ
ծուխերը կը շահագործէ, խմբա-
գիրը իր ստոր հաշիւներուն ու
նկատումներուն համեմատ սկզբ-
բունք կը փոխէ և քննադատու-
թեան պատրուակու անխիղճ զը-
պարտութիւններ, անհատական
կեանքի աներես մերկացումներ կը
հրապարակէ, հազարարձուն մի-
այն իր առասպելական տգիտու-
թեան հետ մրցող ուսուցիչները
պաշտօնի կը կոչէ, իսկ կարող-
ները, ճշմարիտ արժանիք ունե-
ցողները կը ճամբէ այն բանաւոր
պատճառաւ որ անոնք իրեն չքծ-

նելէ զատ զինքը կը քննադատեն
Ուսուցիչը իր պաշտօնի կոչումին
և վեհութեան բոլորովին անար-
ժան՝ անխղճօրէն կսպանէ իրեն
յանձնուած տղոց միտքն ու հօգին,
և իր դիրքը ապահովելու, վար-
ժարանը իրեն կետիկ ընելով՝ հոն
իբրեւ մակարոյժ ապրելու նպա-
տակաւ միշտ իրմէ տգէտ պաշտօ-
նակիցներու հետ կը դաշնակցի,
կարողները, իր մտաւոր և բարո-
յական ոչնչութիւնը համարձակ
հրապարակողները նենգութեամբ
տապալել տալու համար: Ահա այս
բոլոր տիպերը գոյութիւն ունին,
կապրին ու կը գործեն մեր մէջ
որովհետեւ տգէտ անձէ մը աւելի
ցաւալի և վտանգաւոր է ունենալ
տգէտ հասարակութիւն մը որ չը
ճանչնար զինքը կրծող ցեցերը և
չկրնար անոնց գլուխը ճզմել: Ընդ-
հակառակը անոնց անգիտակ մեզ-
սակիցը կըլլայ գրեթէ ամեն ա-
տեն, ամեն ձայնի կարճագանգէ,
և ամեն ցուցուած ուղղութեան
ոչխարի պէս կը հետեւի, առանց
կարենալ անկեղծը՝ կեղծաւորէն,
ճշմարիտը՝ սուտէն, բարին՝ չա-
րէն զանազանելու:

Հասարակութիւնը կոչուած այդ
խոշոր, միամիտ մանուկը, կամ
կրօնաւորներու յատուկ բացատ-
րութեամբ ժողովուրդը աւտոմոն
իրեն ֆլասող, զինքը խաբող արա-
ւածները երբէք չգիտէ արժանա-
ւորագէտ պատժել եթէ նոյն իսկ
զանոնք ճանչնայ: Հոս անխիղճ
զըպարտիչ մը, քառ մըն է որ
փոխանակ ընկերութենէն արտաք-
սուելու, յարարբերութիւններէ
զրկուելու, դարձեալ ամենքէն
կեղծ յարգանք մը կը վայելէ, ա-
մեն շրջանակի մէջ կը մտնայ կե-
նէ ու իր շահատակութիւններէն
երբէք չդադրիր: Հոն իր անար-
ժանութեան, անբարոյականու-
թեան համար պատժուած հան-
րային պաշտօնեայ մըն է որ աւ-
րիշ քաղաքի մը հասարակութեան
պաշտպանութեան ու նոյն իսկ
յարդանքին կարծանանայ: Ի՞նչու
արդեօք. միայն անոր համար որ
մեր հասարակութիւնը ղեռ զար-
գացած, որոշ բարոյականի սենը-
կարագրի տէր եղած չէ: Մենք

ամեն մէկը կրտէ. «Թաղականը տգէտ՝ բայց հարուստ և ազդեցիկ է, զայն վշտացնել չեմ ուզեր. քահանան չահախօր ու քրտէ, բայց ազատ ձայն ու հասակ ունի, գաւակներու ալ տէր է, մեղք է զինքը պատժելը. վարժապետը տգէտ և իր պաշտօնին բոլորովին անարժան է, բայց մեր քաղաքէն հարս առած. ք. աղային պաշտպանեալն է, զինքը ճամբել չըլլար, ազգին մէջ երկպառակոյն լեղալ. խմբագիրը ձրի զրպարտիչ մը, անհասկնալի առտնին կեանքով միայն զբաղող խեղճուկ մըն է, բայց ինչո՞ւս պէտք, անիկայ չարիքով մարդ մըն է, կրնայ ինձ ալ վնասել » ու ձեռնթափ կը մնայ :

Մարդ իր քաղաքացիի պարտականութիւնները անթերի կատարելով է միայն հանրային բարոյականի տէր, մինչդեռ մեր մէջ, անմասն ու բարի կը համարուին անոնք, որ սնոտի առարկութիւններով իրենց անպարտաճանաչութիւնը կուզեն ծածկել և չքմեղանալ : Բայց մեր ժողովուրդի այս վիճակը չէ որ զիս կը վհատեցնէ. մեր մինչեւ հիմայ ապրած կեանքի պայմաններէն ուրիշ արդիւնք չէր կարելի սպասել, այլ զիս յուսա. հատեցնողը մեր վաղուան հասարակութիւնը կազմելու պաշտօն ունեցող հիմնարկութեանց՝ վարժարաններու ներկայ խեղճուկ վիճակն է, ուր՝ մեր տղաք համարակ և ամէն իտէպէ գուրկ ուսուցիչներու ձեռքին տակ անգոյն և անորոշ դաստիարակութիւն մը կը ստանան, այնպէս որ վաղը անոնք իրենց հայրերու արժանաւոր զաւակները պիտի ըլլան :

Արգոս

ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ ՀԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Տ. Մինաս Զեքազ իր մատուցած յիշատակագրին պատասխանին շարքի մը իզուր սպասելէ ետքը եւ չը կրնայով տեսնել Տ. տը Սթալը, որ յայտարարած է թէ իրեն բացարձակապէս անկեղծի է ընդունիլ զայն, ստիպուել է նամակ մը գրել Դեսպանախորհուրդի նախագահին՝ երկրստ պատասխան մը խնդրելու համար : Դեսպանախորհուրդին ընդհանուր քարտեզար, նախագահին յանձնարարութեամբ հետեւեալ նամակը զրկած է Տ. Զեքազի :

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (13)

ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ,

Ընթերցողները կը յիշեն որ Վահրամի տունէն ներս մտած ատեն ըստ ուեր մը սահեք էր. զլուսի սպառնական շարժումով մը. այդ շուքը դաւաճան Մինասինն էր որ անկիւն մը կծկտած տունին վիճակը կը լրտեսէր մեծ ուշադրութեամբ. ան վահրամին հետեւած էր եւ հոն մնաց մինչեւ որ Հրանդի զատառուն տուն վերադարձաւ : Մինաս ալ իր բնակարանը զընաց : Մայրը, տիկին Սաթենիկ, Յովհաննէս աղայի ձերբակալումի լուրը

Տիար

Խաղաղութեան Դեսպանախորհուրդի վսեմ. Նախագահին՝ որ ստացած է ձեր մայիս 24 թուակիր նամակը, հրամանին համաձայն՝ պատիւ ունիմ ձեզ իմացնելու թէ քաղաքական ամեն խնդիրներ դուրս ձգուած են Դեսպանախորհուրդին խորհրդակցութեանց շրջանակէն և թէ հետեւեալը ու է պատասխան չի կրնար տրուիլ ձեզ այն պաշտօնի մասին, որ կըսէք թէ (vous prétendez) ձեզի յանձնուել է Պուլկարիոյ, Եգիպտոսի և ուրիշ տեղերու հայ գաղթականութեանց կազմէն :

Հաճեցէք ընդունիլ, Տիար, բարձ մեծարանաց հաւաստին :

Ի. Վան Էյս

Ընդ. քարտուղար խաղաղութեան Դեսպանախորհուրդին.

Տ. Մինաս Զեքազ հետեւեալ պատասխանը գրած է.

Տ. Ընդհանուր Քարտուղար Պատիւ ունեցայ ստանալու Ձեր երեկուան թուականով նամակը և շնորհակալութիւնս կը յայտնեմ խաղաղութեան Դեսպանախորհրդոյ Տ. Նախագահին՝ ընթացիկ ամսոյ 24 թուականով նամակիս պատասխանելուն համար :

Թէեւ Ն. Վանուլիսի պատասխանը բացասական է, պիտի փութամ զայն հաղորդել Վառնայի, Պուրկարի, Շումլայի, Սիւվէնի, Սիւրմուրէի, Ռատնա — Մահալլէի, Սիւրա — Չաօրայի, Եւապոլիի, Հասքովոյի, Սիւրալուի, Պորիսովկրատի, Քարա — Բունարի, Գալաճըզի, Նովա — Չաօրայի, Քէրմէնի, Չիրբանի, Ալուսի, Հարմանլըի, Թերնովա — սէյմէնի, Քատնապօլի և Տալլիի հայ գաղթականութեանց որոնց հայկական խնդրոյ և իմ պաշտօնիս վերաբերեալ վաւերագիրները՝ մասնաւոր խնդրագրով և երկար յիշատակագրով մը միասին՝ «Խաղաղութեան Դեսպանախորհուրդին» վսեմ. Նախագահին» ուղղուած գրոց պահարանի մը մէջ, մայիս 18ին, ժողովին գումարումէն մէկ

ժամ առաջ, յանձնեցի ժողովարար հին պաշտօնէութեան պետին Սիւվէնեքը ինձ տեղեկագրուած է որ փ. Պուլկարի հայ գաղթականութիւնը ալ մեծ միջինկ մը կազմած և հայկական խնդրոյ և իմ պաշտօնիս վերաբերեալ համաձայնութեամբ քուէարկած է, և ներքին հեռագիրը կը հաստատէ թէ միւսնոյն որոշումները քուէարկուած են Գահիրէի հայ գաղթականութեան կազմած մէկ միջինկին մէջ : Արդէն բոլոր այս որոշումները Միջինկներուն գիտններէն ուղղակի հաղորդուած են եւրոպական տէրութիւններու և Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարարութիւններուն, ինչպէս նաեւ խաղաղութեան Դեսպանախորհուրդի Նախագահին : Ուստի իրաւունք մը ունիմ պնդելու թէ ինծի պաշտօն յանձնուած է հոս ներկայացնել Բ. Դրան հազարաւոր հայ հպատակները :

Աւելի չպիտի ծանրանամ այս կէտին վրայ, քանի որ Դեսպանախորհուրդը որոշած է իր խորհրդակցութեանց առարկայ չընել հայկական խնդրը, զոր զուտ քաղաքական խնդիր մը կը նկատէ, մինչդեռ ինձի պաշտօն յանձնողներուն համար արդարութեան, մարդասիրութեան և խաղաղութեան խնդիր մըն է : Խանարհելով հանգիստ Դեսպանախորհուրդին որոշման առջեւ, չեմ կրնար չի յայտարարել թէ հայկական կոտորածներէն ողջ մնացող ազգակիցներս չպիտի մոռնան երբեք թէ տէրութիւնները քանիցս հանգիստութեան պէս պարտականութիւն ստանձնեցին Հայաստանի քրիստոնեաներուն վիճակը բարւոյնելու, որոնք ուրիշ բան չհն պահանջիր այլ միայն ապրելու իրաւունքը, բայց թէ անոնք ոչ միայն ամենափոքր ճիգ մը չընեն վերջ մը տալու համար այսպիսի անարդարութեան մը, որ որքան բարձրագոյն կողադակէ այնքան ալ դերուա կրնայ դարձանալ, այլ և թոյլատրեցին Սուլթանին՝ թաղել բարենորոգման այն ծրագիրը որուն գործադրութիւնը ստիպողաբար իրմէ

պահանջած էին՝ Սասունի շարքերուն հետեւեալքով, կամ մանաւանդ զայն խղիւղ 300,000 հայ նահատակներու և նահատակուհիներու արեան մէջ, և մէկ կողմ նեւ տեցին ուրիշ ծրագիր մը զոր իրենց ներկայացուցիչները Կ. Պոլսոյ դեսպանատուններուն գաղտնիքներուն մէջ յորինեցին՝ երբ թուրքահեղէն պատերազմը կսկըսէր : Չպիտի մոռնանք երբեք թէ նոյն տէրութիւնները, երբ կը դատապարտէին Հայ ժողովուրդի ամենէն անտանելի ճնշումի մը հետեւեալքով ապստամբութեան մը զուտ մէկ մասին յուսահատական գործերը, միւսնոյն ժամանակ անկարելի մնացին արեւելեան ցեղերու ամենէն խաղաղասէրին գահիճներուն լիբր յանգեցնելու և հին քրիստոնեայ ազգութեան մը սիւլթանութիւնը ոչնչացումին հանդէպ, այն ազգութեան որուն պաշտպանութիւնը ստանձնած է ին թէ՛ Բարիլի, թէ՛ Սան Սթէֆանօյի, թէ՛ Պէդլինի և թէ՛ Կիպրոսի գաշնագիրներով : Հայաստան, եւրոպական դիւանագիտութեան այդ զոհը, իր ձայնը միշտ պիտի բարձրացնէ անոր յիշեցնելու իր խոստումները : Աւետարանի առակին այրիին նման՝ ան երբեք չպիտի դադրի իր դիմումներով անհանգիստ ընելէ իր դատաւորը, մինչեւ որ արդարութիւնը գործադրուի :

Հաճեցէք ընդունիլ, Տիար Ընդհանուր Քարտուղար, իմ բարձր մեծարանաց հաւաստին :

Մինաս Զեքազ

ՇԵՐՕ

ՇԱՍԱԽԻ ՅԱՅՏԵՒ ՖԷԴԵՐԱԼ-ԶԱՅԴՈՒԿԻ
ՇԵՐՕՍԱԿԱՆ ՆԱԶԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ
1896թ. ՄԱՅԻՍԻՆ
Բ.

Անց էր կէս գիշեր... բնութիւն խաղ էր...

Լուսինը պայծառ շողեր կաթկթէր, Շողեր մարմարեայ, շաղեր արծաթեայ, Աստղերը կայծկտան յատակ բերեղեայ :

Նոյնն էր ամէն ինչ, նոյնն էր եւ Դէրիկ

— Այո՛, բռնի. եւ եթէ հարկը պահանջէ, մինչեւ անգամ միաքաղաք հոմ զայն առեւանգել տալ :

— Լսէ՛ ինձ, գաւակ, հիծեց դաւաճանին մայրը վշտահար չեղտելով, զաւակին սիրտը կակղել ջանալով :

— Մանաւանդ հիմայ, մարդ մտիկ ընելու ատեն չունիմ, ասկից քառորդ մը առաջ Յովհաննէսի տունին բոլոր սիւնը հակած պահուս վահրամ տեսայ, ըստ կողորդալի եւ գողացող ձայնով մը :

Շուշան այդ անունը լսելով քիչ մը նայ պիտի նուազէր :

«Վահրամը, անոնց ուրախութիւններուն, անոնց երջանկութիւններուն մասնակից, ինձմէ հազար անգամ երջանիկ այդ ստահակը : Ալ կանկաւ չունիմ որ այդ անկուտի սրկայի պիտի տան Հրանդը, Բայց ես հեղտութեամբ

Թեան պատճառը կուզեմ իմանալ. շատ պարզ է անիկայ : Այս առաւօտ Շուշանը Յովհաննէս աղայի տունը գացեր էր, Հրանդի ծննդեան տարեգարծին առիթով ըլլալիք պատարասութիւններուն օգնելու համար. յանկարծ երկու ոտականներ եւ փոխ մը գալով Յովհաննէս աղան ձերբակալու եւ երբ այս գոյժը առի, իսկայն մտածեցի թէ ասոր մէջ անպատճառ քու մասոյ կար :

— Եւ չե՛ս սխալիր :

— Ձեմ սխալի՛ր, դու ես այդ խօսքը ըսողը, Մինաս, անօրէն գաւակ : Յովհաննէս աղայի պէս բարի մարդու մը տունը մարեղէն ի՞նչ պիտի շահու, ըստ տիկին Սաթենիկ այն համարձակութեամբ որ մօր մը յատուկ է :

— Հրանդը, հասկցա՞ր, Հրանդը աւելցուց Մինաս մեղդին :

— Բռնի՛ր :

Շուշանէն առած ըլլալով, նոյն հետայն հետեւեալքով էր որ Մինասի սպանալիքներուն արգիւնքն եղած պիտի ըլլար այդ : Վշտացեալ կիներ մահու չափ տխուր էր : Մինաս երբ իրենց տունը մտաւ, տեսաւ մօրը յայտնի սրտի կոտորածութիւնը եւ մինչեւ այն պտեն չը գործածած մէկ ձեռովը հարցուց :

«Ի՞նչ կայ, ի՞նչ ունիս նորէն :»

— Ոչինչ, պատասխանեց տիկին Սաթենիկ :

— Նորէն տունին մէջէն սեւ կառու մը անցեր է, գոչեց Մինաս. ի՞նչ կայ, պիտի խօսե՞ք, աւելցուց դաւաճանը, Շուշանի կողմ դառնալով որ վախով համակուած կը գողար :

— Ի՞նչ կը պոռաս, կը կանչես, պատասխանեց վերջ ի վերջոյ տիկին Սաթենիկ, սրտնեղութեամբ, մեր տխուր

Միայն Չաթոյի շիրմին մօտիկ
Թարմ հողաբլուր մ'կանգնած էր լոյն,
Շէրոյին էր դա, հսկայ հայրուկին...

«Չաթոյի կողքին, Չաթոյի կողքին
«Կ'ուզեմ ես հանգչիլ» այս իր խօսք
վերջինս:
Ո՛ւր էին արթնո՞ք, ո՛ւր եօթը քաջեր...
Չէին երեւում... ո՛ւր... ոչ ոք գիտէր:

Պարսքն ու կոչու՞մը վեհ անձնազոհին
«Անմոռաց վրէժ»ն քաջ Շէրոյներին
Ուր, որ կը մղեն եօթնեակ քաջերին
Ո՛ւր, որ կը մղեն ֆէզայիններին...

Դու՛նմանայ ձորի խո՛ւլ Դէրիկ վանքում
Չաթոն ու Շէրոն միմեկի չեն հանգչում,
Նրանց ալ եւ ձախ մնչիկ կան պառկած
Չորս զոհ հայրուկներ, զոհեր Հայրեն-
եաց...

Ներսէս Իշխանեան կտրի՞ծ Սիւնեցին,
Կարկանդակ Յակօբ, Մանուկ Շատախցին
Եւ տէր Մովսէսեան վանեցի կարօն,
Ապա նրանց քով Չաթոն ու Շէրոն:

Ջան-ֆէզայիներդ պինդ գրկեր Դու՛ն-
մա՛ն,
Որ ծլին, ծաղկին, հոտ տան Հայու-
թեան...

Եւ արշալոյսին թարմիկ մայիսեան...
Նոքա վեր կեննեն խոր՛խտ, յաղթա-
կա՛ն...

Հուսնեակ գիշեր մ'էր՝ աստղեր բիւ-
րաւոր
Փափու՞մ էին, լու՞ռ խորհրդաւոր...
Երկինքը պարզ էր, պարզ, ջինջ կա-
պուտակ
Պատառ մ'ամպ չ'կար, յստա՛կ էր յըս-
տակ...

1899 Դեկտ. 10/22 ՈՍԿԱՆՆԱԶԱՐ
Դահլիճ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ ՎԱՐԴԱՆԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎՐԱՅ

(Շար. Աստուծոյ քիւնէն)
Յազկերտ նախատեսելով, որ
Հայոց այս վարմունքը կղերի ազ-
գեցութեան արդիւնք է, նախա-
րարներն (որոց աւագն էր վասակ
Սիւնի) ու աւագանին առանձինն
արբունք հրաւիրեց, և այսպէս
հեռացնելով զանոնք կղերի ազդե-
ցութենէն, յաջողեցաւ կրակազաշ-
տութիւնը ընդունել տալ նախա-
րարաց: Նախարարաց Պարսկաս-
տան հասնելէ վերջ, Յազկերտի

նախարարաց ցոյց տուած սպառ-
նալիքն ու այս վերջնոց պատաս-
խանք, և այս պատմութեան խել
մը յարակից պարագաներ, զոր
շատ անգամ իրարմէ տարբեր ու
հակառակ՝ կը պատմեն մեզ Եղի-
շէն ու Փարպեցին, կոսկածելի են
և աւելի արդիւնք մեր պատմչաց
հետադարձան ինքնահնար յաւել-
ուածոց: Այսպէս Եղիշէ կը պատ-
մէ թէ՛ նախարարք արքունիքն
հասնելուն պէս կանպատուին և
անարգանօք կարտաքուսին, (տե՛ս
Եղիշէ էջ 72-80) սակայն տրամա-
բանութեան, խորագետ Յազկեր-
տի հեռատեսութեան, իր քաղա-
քական հայեցողութեանց և նոյն
խիւ իր մասնաւոր և առանձին
հրաւերին հակառակ էր այդօրի-
նակ վարմունք մը: Եւ իրաւամբ
Փարպեցի՝ հակառակ Եղիշէի՝ մեզ
կը պատմէ թէ՛ նախարարք ըստ
օրինի ընդունուեցան և մեծարուե-
ցան Պարսից արքունեաց կողմա-
նէ (տե՛ս Փարպեցի էջ 149-150):

Հայ նախարարներն ու աւագա-
նին Պարսից արքունիք հասնելէ
վերջ, Յազկերտի՝ մոզուածին ըն-
դունելու համար ըրած հրամանին
վրայ, իրենց մէջ ընդերկար խոր-
հելէ վերջ, հեռատեսութեամբ ա-
ռերես ընդունեցին կրակազաշ-
տութիւնը, և վարդան Մամի-
կոնեան բաւական դիմադրելէ վերջ,
նախարարաց համոզելի և իրաւա-
ցի դիտողութեանց առջեւ ստիպ-
ուեցաւ տեղի տալ ու համակերպիլ
անոնց: Եղիշէ թէ՛ս այս հաւատա-
փոխութեան պատմութեան մէջ օ-
տարի մը ազդեցութեան կը վի-
րագրէ նախարարաց համակերպի-
լը, սակայն Եղիշէի չափ դերա-
հաւան չենք հնթադրելու թէ՛ հայ
նախարարք, մանաւանդ վասակ
Սիւնի, որուն քաղաքագիտական
տաղանդն ու վարչական կոյրվը
գնահատուածէր Հայէն ու Պարս-
կէն, աւանց գիտակցութեան և
խորին ու կատարեալ համոզման,
օտարի մը կարծիք ընդունելու
չափ կարճամիտ ու տգիտ լինէին,
եթէ իրենք կանխաւ կշռած եւ
ուսումնասիրած չը լինէին այդ
հարց. և արդարեւ Եղիշէի պատ-
մութեան այդ մասը ըստ մեզ ա-

ւելի վիպային է քան իրական:
Մեր այս կարծեաց ուժ կուտայ
սա պարագան թէ՛ Յազկերտ Բ.
գիտնալով, որ հայ նախարարաց
ու աւագանոյն, ինչպէս նաեւ
վրաց և Աղուանից հաւատաւոր-
ութիւնը առ երեսս էր և անոնց
անկեղծութիւնը կոսկածելի, իբրեւ
պատահ. իր քով պահեց վրաց
Բագշին «Աղուշ» և նախարարաց
ամենակատարածելին ու տաղան-
գաւորին՝ վասակ Սիւնիի երկու
զաւակներն Բաբիկ ու Ամիրներսէհ
(տե՛ս Ղազար փարպեցի էջ 177
տիպ վիճակի 1894): Նախարա-
րաց առ երեսս ուրացութեան բո-
լոր Հայաստան հասնելով, մօնա-
ւանդ հայ կղերականութեան մէջ
մեծ յուզում յառաջ բերաւ. այս
յուզումը կը սաստկանար երբ եօ-
թը հարիւր (չափազանցուած Եղի-
շէն) մոզուց գալստեան գոյժը կը
առնուէր: Տեղն է ըսել թէ՛ լու-
սաւորչայ կաթողիկոսական տան
ժառանգորդներն ու յաջորդները՝
որք ընդհանրապէս հաւատարիմ
ու անձնուէր գտնուած են թագա-
ւորական զահուն և որոց միայն
մէկ քանին անհեռատեսութեամբ
մեր պատմութեան մէջ սեւ ու աղ-
տոտուած էջեր կը տեսնենք. կը
զգային թէ կրօնի, մօնաւանդ
այն դարուն մէջ: Հայ ազգի գո-
յութեան այդ հաստատուուն
կուսանի բարձունքն ու փճա-
ցումը, անփոխարինելի և անգոր-
մանելի հետեւանքներ պիտի ու
նենար, այսու եռանդուն գոր-
ծունեութեամբ, հակառակ հոսանք
մը պատրաստեցին ուրացեալներուն
դէմ:

Արտաշէս կարապետեան
(Շարունակելի)

ԼՐԱՔԱՂ

Գրագէտ և փոստտուրան Տ. Զօհ-
րայ Տրապիուսի համար պաշա-
պանողական մը գրելով յրկիր է
զայն Կ. Պոլսէն Բարիկ՝ Սատանայի
կղզիին աքսորեալին համար կաղ-
մուած Սինտիքային որ իր պա-
տասխանով շնորհակալութիւն յայտ

նէր է հայ փաստաբանին և անոր
ոսկի կոծակ մը նուիրեր է, վրան
Տրապիուսի մանրանկարով:

—Վանի կաթողիկոս Երանոսցին
մէջ պատուարուած որբերէն եօթ
հասն ալ տեղուորուեր են տեղ-
ւոյն ազգ. որբանոցին մէջ:

—Գարու Պաշի (վրն) ազգա-
յինները ամբողջովին վերադարձեր
են ազգ. եկեղեցւոյ գիղղը, կը
յուսացուի որ վանի կրօնաւորութե-
ւան առջեւն առնուած է: Այս
պատճառաւ կաթողիկոս միսիօնար-
ները որոշեր են առ այժմ չը շի-
նել յատուկ եկեղեցի մը, զոր մը-
տադրած էին առաջ կառուցանել,
ալլ բաւականանալ այն շէնքով ուր
ցարդ կը կատարեն իրենց եկեղե-
ցական արարողութիւնները:

—ԼՈՒՍՄԱՅ հանգչեալ խմբա-
գիր, Տ. Գիւտ Ա. քահանայ Ա-
ղանեանց, ձեռնարկած է Թիֆլիզի
մէջ ապագրել Թ. Պարսեանի գոր-
ծերը: «Ծիծաղ» եւ «Արեւելեան
Առաքնաւոր» լոյս տեսան ար-
դէն:

—Պօղոս Նուպար բաշա՝ ի պա-
տասխան Պատրիարքին նամակին, որով
իրեն դիմում եղած էր Շտհադար-
վարժարանը վերաբանալու խըն-
դիրքով, 200 ոսկի զրկէր է Ս.
Օրմանեանի որպէս զի բարձրելով
յիշեալ վարժարանէն աւելցած 800
ոսկիին վրայ, 1,000 ոսկի գոյա-
նայ և այս գումարը շահու գըր-
ուի մինչեւ որ 4,000 ոսկիի բարձ-
րանայ, ու ապա այս զրամագը-
խով ժառանգաւորաց վարժարան
մը բացուի Սիսի վանքին մէջ՝
բարիխիշատակ վարդապետին վեր-
ջին կամքին համաձայն:

—Երկու հայ երիտասարդներ
որոշեր են Թիֆլիզէն քաղաքով եր-
թալ Բարիկ երեք ամսուան մէջ,
Արեւստահանդէսը տեսնելու հա-
մար:

—Իշխան Բէհրութեանց որ
Թիֆլիզի մէջ ձերբակալուած և
Բեթերսպուրկ զրկուած է դատ-
ուելու համար, ամբաստանուած է
թէ կովկասի կառավարչապետ կա-
լիցին իշխանին գաղանի տեղեկա-
գիրը հաղարդած է Թալմախ:

—Ի նպաստ հայ կարօտեալնե-
րու Պատրիարքարան զրկուած է
փ. Պօլսէն 78, Ասոր Պօլսէն 15,
Կիւմուք 81/4 օսմ. ոսկի.
Գօնեայէն 2510 զրշ., Ամերիկայի
Ուսթըր քաղաքէն 40, Լին քա-
ղաքէն 47 անգլ. ոսկի:

ատոր առաջը պիտի առնեմ: Վահրամն
ալ պիտի հետեւի Յովհաննէսին եւ քիչ
ատենէն պիտի տեսնէ բանսը, Մէլի-
րէն, Աքեան:

—Աստուած իմ, գոչեց Շուշան
խեղդուկ ձայնով մը:

—Ողջա՛, զաւակս, իղձա՛ իմ վրաս,
աւելցուց մայրը:

—Ողջա՛մ, ես... հապա իմ վրաս
ո՞վ խղճաց. ամէնքը ծաղրեցին զիս,
անարկեցին, մերժեցին. առկէ ետքը
թո՛ղ երթան տեսնեն թէ ո՞վ է եղեր
Միհայրը:

«Դաւաճանը անթի գայլի մը պէս
ճաշե՞լ ետք գնաց հանգստանալու:
Շուշան յուսահատ իր սենեակը քաշ-
ուեցաւ Վահրամի հասցէին ուղղուած
սպառնալիքի տակ կրկնակի սարսափա-
հար, մէջ մը անոր համար որ Վահրամ
Հրանդիկին պիտի փեսայանար, մէջ մըն

ալ, որ աւելի կարեւոր էր, անոր հա-
մար որ իր միակ պաշտելին կեանքն
ալ վտանգի պիտի ենթարկուէր: Շու-
շան երկրորդ թղթիկ մը գրեց զոր ա-
ռաւօտուն իրենց թուրք ծառային հետ
Վահրամի տունը զրկեց:

Կ'արժէ որ Յովհաննէս ազայի բան-
տին մէջ ունեցած առաջին տպաւորու-
թեան վրայ խօսինք համառօտակի:

Ամբաստանեալը երբ արգելարանէն
ներս մտաւ, դուռը վրայէն գոցուէլէն
ետք՝ պահ մը խոնտ. բանտին մէջ՝
ուր օրուան աղօտ լյուր հազիւ թէ
փոքրիկ պատուհանէ մը ներս կը թա-
փանցէր, մտաշնորո՞ւմ մը ունեցաւ:
Դաւաճանը ինքզինքանայ այդ անձը բան-
տի վրայ գաղափար չուէր: Այդքան
հեղձուցիչ մթնոլորտի մը տիրապետու-
թեան տակ չէր զգացած ինքզինքը

բնաւ: Յուսահատութիւնը պաշարեց
զինք եւ անձնապաշտութեան սեւ
խորհուրդը ծնաւ մտքին մէջ: Այդ
վայրկենին, իր մոլորուած երեւակա-
յութեան մէջ յանկարծ պատկերացաւ
Հրանդիկի դէմքը: Իր հոգեհատորը տե-
սաւ, անոր, յուսահատ եւ թշուառ:
Երեսու մը անցաւ իր մէջ, սաստիկ
ցնցում մը որ սթափեցուց զինքը:

«Չէ՛, չէ՛ չ'պիտի մտնիմ. բնգհա-
կառակը պիտի ապրիմ. չէ՛ մի որ ես
ինձի չեմ պատկանիր. հապա ինձմէ
զատ ո՞վ պիտի պահպանէ այդ հրեշտա-
կը, «պոհար» զոր ետիս պիտի ձգեմ.
իմ փառքի ու պատուին լրացուի մը ա-
նիկայ է եւ անիկայ պէտք ունի ինձ:»

Այսպէս անցուց առաջին օրը: Երե-
կոյեան դէմ բանտապահը ներս մտաւ,
հարցուց թէ բանի մը պէտք ունէ՞ր:
«Ոչ» պատասխանեց բանաւորեալը,

որուն մօտ ճրագ մը միայն բերին զը-
րին:

Կեանքին մէջ առաջին անգամն էր
որ Յովհաննէս աղա այդպիսի գիշեր մը
կանցնէր այնքան զրկանքի մատնուած:
Վայմաքամ Բիզա էֆէնտիի հրամանին
համաձայն՝ ո՛չ անկողին, ո՛չ վերմակ
պիտի տրուէր իրեն: Իսկ ծանօթներու
նոյն իսկ իր ամենամերձ ազգականնե-
րուն լացարձակ արգելք կար զինքը
տեսնելու:

Տագնապներով լեցուն գիշեր մը ան-
ցուց. առանց չիլի միացող ծանրաճոտ
լամպարիկի մը զիմացը ծալապատիկ
նստած՝ կէս մրափուռներով տանջուե-
ցաւ մինչեւ որ օրը լուսացաւ:

Շ. Կամուսարական
Շարունակելի

—Բարիքէ կը գրեն մեզ.
Հոգաբարձութեան և Օժանդակ
յանձնաժողովոյ ընտրութիւնները
վերջացան երէկուան քուէարկու-
թեամբ: Պէտք է գիտնալ որ այս
պաշտօնէութիւնները ճշգիւ սահ-
մանադրութեան տրամադրութեանց
համաձայն չեն կազմուիր: Օժան-
դակ ըստաժը ունի այն գերըզոր
գաւառներու մէջ կը կատարեն
քաղաքական և երեսփոխ. ժողով-
ները: Հոգաբարձութիւնը իր հը-
րաժարականը Օժանդակ յանձնա-
ժողովին կուտայ որ կընտրէ և կը
հրաժարեցնէ հոգեւոր հովիւը և
ուրիշ պաշտօնեաներ:

Սուլթանի թիկնապահներէն Ահ-
մէտ Ճէլալէտտին բաշա Բարիզ և
Ժընէվ զրկուած է՝ որպէսզի հայ
յեղափոխականները համոզէ ու եւ
շարժում չընելու, ասոր փոխարէն
խոստանալով յեղափոխականներու
պահանջներուն գոհացում տալ բա-
րենորդումներու գործադրու-
թեամբ: Քանի՞ երրորդ անգամ
է այս: Միշտ խաբել:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՌԿԱՅԱՑՈՒՄ
Ի ՆՊԱՍՏ Տ. ՅԱՐ. ՉԱՐԵԱՆԻ

Ինչպէս արդէն ծանուցած ենք,
խումբ մը երիտասարդներ յառաջիկայ
շաբաթ երեկոյ Անկէլ Սլավօֆի սրա-
հին մէջ հետաքրքրաշարժ ներկայա-
ցում մը պիտի տան ինպատակ Տիար
Յարութիւն Չաքրեանի, որուն տկար
ու հիւանդագին վիճակը միացած նիւ-
թական անձկութեան հետ՝ հանրու-
թեան վրայ պարտք կը դնէ քաջալի
րել երիտասարդական խմբին այս գո-
վելի ձեռնարկը ի պատիւ ազգային հին
աշխատաւորի մը:

ԼԱ ՀԷ ԳՕՆՖԵՐԱՆՍԸ

Մ. Մինաս Չերազըն գօնֆե-
րանսա թագաւոր իթմիի արդու-
հալա ճէվապէն, բօլթիթիթայա
շուժուրիօլան մէսէլէլէրին գօնֆե-
րանս թարաֆընտան նաղարը
տըզգաթա ալընմամսը թահթը
գարարա ալընմըլ օլտըլը սէպէպլէ
էրմէնի մէսէլէսի հագգընա տաիի
քէնտիսինէ հիշ պիր ճէվապ վերի-
լէմէլէճէկինի Գօնֆէրանսըն պաշ
քեաթիպի՝ րէյիս թարաֆընտան
Մ. Մինաս Չերազա թահրիթէն
պէյան իթմիշ տիր:

Սթանպօլտան պիտի իրարիկինէ
նաղարէն՝ Օրմանեան Պատրիարք
Լա Հէ գօնֆէրանս րիյասէթինէ
պիր թէլէկրաֆ վէրմիշ, վէ էվ-
րոքատա պուլընան էրմէնիլէր թա-
րաֆընտան Գօնֆէրանսա օլան միւ-
րաճաթլարըն միլլէթ թարա-
ֆընտան վուզու պուլմըլ նաղարը
իլէ պագըլթաթաթաղարընը վէ
միլլէթին րէսմի մագաժընտան
թանըլթաթաթաղարընը պիտի իրմիշ
տիր:

Եաշա՝ Օրմանեան: Եու գահ-
ըմանըղա արթըզ հիշ պիր տէ-
յէճէք գալմազ:

ՏԱԽԻԼԻՅԷ

Սօպրանիյէ պէշ մահալըն ին-
թիսապընը թաստիզ, վէ իթիսինին
ինթիսապընը նիզալ վէճհ իզլէ
իծրա օլընմամըզլարը ուսպէպլէ
լազվ իթմիշ տիր: Սօֆիա սապըզ
պէլէտիլէրէյիսի կ' Երապլանքինին
ինթիսապը տաիի նիզալմազ մա-
գաժընտա րէստ օլընմըլ տըր:

—Հիւքիւմէթ իշպու 1898-99
մէքթէպէնէսիիչիւն օթուզտէօրթ
թիւրք մէքթէպէլէրինէ 44,200 լէվ
իհսան իթմիշ տիր:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻՅԷ

Թօգատա եագըն, Գօճաճըզ նամ
մահալտէ պուլընան էրմէնի կա-
թուլի վանքըն միարանլարընտան
Պաթմանեան վարդապետին քէնտի
օտաւընտա պօլուլմըլ պուլընտը-
ղընը թէլէկրաֆ պիտի իրիօր: պիր
գաշ շիւֆէլի քիշիլէր հիւքիւմէթ
թարաֆընտան տէրտէսթ օլընմըլ-
լար տըր:

—Բուժ կազէթալարը՝ կիրիտ-
տէ Բուէնս Երիկիտա գաստ իթ-
մէք մագսէտի իլէ կիլիճէ թէր-
թիպ օլընմուշ պիր ֆէստաթըն մէյ-
տանա չըգաղընը վէ պիր թա-
գըմ շիւֆէլի իսլամլարըն ատաւտան
տըշարը չըգաղըլմըլ օլաղլարընը
պիտի իրիօր:

—Երեւանտա պիր օսմանլը գօն-
սողոսըն թայինինէ ռուս հիւքիւ-
մէթինին հիւսնի րիզաւընը էլտէ
իթմէք իշիւն՝ Պապը Ալի քէնտի
Բէթէրապուրկաթի սէֆիթինէ պա-
թէլէկրաֆ թալիւմաթ վէրմիշ տիր:
Ֆազաթ ռուս հիւքիւմէթի՝ քէն-
տի սինօրընա եագըն օլան իշիլէր-
նի եագընտան կէօզէտիպ Պապը
Ալիյէ խապէր վէրմէք մէմուրիյէ-
թինէ թային օլընմըլ պիր քիւ-
սէնին Երեւանա կէօնտէրիլմէսինի
իսթէմէտիկինտէն, Պապը Ալիին
շու թէլէկրաֆին պուլընան էվվէլ
պիր գաշ տէֆա րէստ իթմիկի
կիպի, պուլ տէֆա տաիի գապուլ
իթմէմիշ տիր:

—Եւմէն ըստանըն թէսքին
իթմիշ օլան թիւրք օրաուսընըն
գօմանտանլարընա Սուլթան թա-
րաֆընտան նշանլար իհսան օլու-
մըլ տըր:

—Նասըլ քի կէշէն նուսիէմիզ-
տէ տէմիշ իտիք, կապիկատա
պուլընան էրմէնի մուհաճիլլէրին
թիւրքիթա կէրի կէլմէլէրի հագ-
գընտա Պապը Ալի վէ Ռուսիա
պէյինտէ ճէլէյան իտէն մուխա-
պէրաթ ռուս սէֆիթի Մ. Չիւն-
վիէֆին Սթանպօլտ ապտէթինէ
տէկին թէլէլիթ օլընմըլ տըր: Բի-
վայէթէ կէօրէ՝ էրմէնիլէրին թուր-
քիթա ապտէթի հագգընտա Ռու-
սիա թարաֆընտան իսրար օլըն-
մամսընը Չարա թէլէքիֆ վէ րէ-
ճա իթմէք իզլէ Սուլթան սապըզ
վիէննա էլիսի Չիյա բաշայը

Բէթէրապուրկա կէօնտէրէճէք ի-
միշ:

—Բարիզ մահքէմէի թէմիլի Տը-
րալթու տալմասընըն հէնիտէն պիր
հարպ տիվանը թարաֆընտան
պապլմասընա գարար վէրմիշ տիր:

—Իմէրաթ օլիլէլմին թիւր-
քիտա կօլնուլընտա պէրապէր
պուլընան թիւրքիթալը ֆօթօկրաֆ-
լարըն չէքտիլլիթի թասվիլլէրին՝
պիր գաշ կիւն էվվէլ Պիւլլինէ կիլմիշ
օլան ալմանեալը միւշիթ Գօմէլէ-
վինէր բաշա Սուլթան թարաֆըն-
տան իմէրաթ օլիլէլմէ իհտա
իտէճէքիմիշ:

—Պիր ֆէս ֆապրիգասը թէէ-
սիս իլմէք մագսէտի իլէ Գրէտիթ
անշթալթ նամ պանգաթըն հիւսիլ-
սի թահթընտա պիր շիւքէթ
թէլլըլ օլընմուշ տըր: Թիւրք հիւ-
քիւմէթի իսէ խալլը վագրթտան
պէրի պալմազ գալմըլ օլան քէն-
տի ֆէս ֆապրիգասը իշիւն էվ-
րուսա եէնի մաքինալար սիրա-
լըլ իթմիշ, լաքին թիւրք ֆապ-
րիգասընըն էվրօթալլարըն աշա-
ճաղը ֆապրիգա իլէ գօնգիւրանս
իտէմէլէճէի աշիքիթալ տըր:

—Եու տրա թիւրքիթա վէ Եու-
նան պէյինտէ մինտէպալթ բէք
տօսթանէ օլուպ, Երեւանըն միւ-
րէվլիճի էֆիթալը օլան Սիլվէթ
իքի տէվլէթլէրին տօսթլըլընըն ի-
քիսինէտէ թիւրքիլմէ բէք խա-
լըլը օլաճաղընտան պահս իլէ,
Օսմանլարա վէ էրմանլարա
պիրպիլլէրի իլէ էյի գօմըլ վէ
տօսթ նաղարը իլէ պագմալարընը
թալմիլլէ իիտէյօր:

—Թիւրքիթա էօքսիւզհանէ-
լէր թէէսիս իլմէք մագսէտի իլէ
Պապը Ալիտէ պիր գօմիսիթը
մախսուս թէլլըլ օլմուշ տըր,
թուրք կազէթալարըն պէյանընա
կէօրէ՝ էվրօթալլարընալմըլ օլտը-
ղը էօքսիւզհանէլէրտէ պուլընան
պիր թաղմ էօքսիւզլէր շիմտի-
տէն հիւքիւմէթ էօքսիւզհանէլէրի-
նէ գապուլ օլընմուղա արղուքէշ
իմիլլէր:

Հիսապէս պուլընար էրմէնի օլ-
մալը տըրլար, զիրա էրմէնի էօք-
սիլլալլէրըն գուլլանմազ թիւր-
քիթա կազէթալարընա մէն օլընմըլ
տըր:

ՉԱԽԻՐԻ ԲԻԱՑԱՍԻՐ

Վառնա, 26 Մայիս

Պուղսայ
Վալոն, լիպրա 55-58 հէք 10-12.75 ֆ.
Արապա, 55-60 հէքթ. 12.13.50
Արապ
Լիպրա 42-50 հէքթ. 7-7.20 ֆր.
Մըսըր
Վիկոն 55.57 լիպրա. 4.10-6.20.
Կիւնտէ 8-10 արապա վէ 10-12
վալոն պուլընալ վէ միսիթ 5-6 արապա
արապ կէլմէքտէ տիր:
Արապա մուսթէլէսի Նաթլէօն 31 ֆր.
հիսապը իլէ:

ՆՈՒԱԳԱՎԱՆԴԷՍ
Ի ՆՊԱՍՏ
ԱՂԱՋԱՆՆԵՐ ԿՐԹԱՐԱՆԻՆ
ՎԱՌԱՋԵՐ
ՍԱԷՏԻԼԵՏԻԷ ՍՐԱՇԻՆ ՍԷՋ
26 ՄԱՅԻՍ 1899

ՅԱՅՏԱԳԻՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

1. Սեմֆօնի, դաշնակի վրայ Հայտըն
Օր. Լ. Ե. Ն. Պ. Ամիրխանեանց
2. Հագար Երանի Ն. Պ. Ամիրխանեանց
Օր. Է. Դօնչէկիւրեան,
3. Պաղլա, դաշնակի վրայ Եօթէն
Պր. Ն. Ամիրխանեանց.
4. Լիւսի քը Լաւիւնուոն Տօնիճէթթի
Տիկին Ալֆանօ
5. Պաղլա Աւարայրի Ալիւան
Օր. Է. Դօնչէկիւրեան.

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1. Պիոսկօզ, դաշնակի վրայ Եօթէն
Պր. Ն. Ամիրխանեանց
2. Ողորմութ. մեհախօս. Վիկթ. Հիւկօ
Օր. Պ. Բիւրքեան
3. Լիպոն Սանթո, երգ Բիւնթօթթի
Տիկին Ալֆանօ
4. Յիլիշիւց, լուսակի վրայ Վէպէր
Պ. Պ. Բիւնթօթթի և Բոսլաթթի
5. Այսա, ուսման. երգ Վէրտի
Տիկին Ալֆանօ.

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1. Ալիս Աստաճ, նալպանտեանց
Օր. Տէմիրճեան և Պ. Գալֆայեան
2. Մեհախօսութ. Պուլի. Վազօֆ
Տ. Մ. Կարապետօֆ
3. Թրօլլաթթի, ուսման երգ Վէրտի
Տիկին Ալֆանօ
4. Լօնիկիլիկ լուսակի վրայ (Ն. Ա-
միրխանեանց) Վալիւն
- Պ. Պ. Բիւնթօթթի և Բոսլաթթի.
5. Գալպաթթի և Ռուսիլանա (Պ. Ն.
Ամիրխանեանց) Մասքանի
Օր. Լ. Ե. Պր. Ն. Ամիրխանեանց

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ



ՍՈՑԻԱԼ ԳԱՂԱՊԻ

ՊՈՒԼԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ ԵՐԱՇԽԱՌՈՐԵԱՆ
Ա. ՊԱՐԳԵՆԷՆ Է 500,000 ՖՐ. ՈՍԿԻ
50,000 տոմսեր հրապարակ հանուած
են, որոնց 25,000ը պիտի շահին հե-
տեւեալ կերպով, ներկայ տարւոյ՝
Յունիս 9ին 1,500 թիւեր 92,680 ֆր.
Յուլիս 7 1,500 » 135,180 »
Օգոստ. 4-5 2,000 » 241,780 »
Սեպտ. 3-4 » » 309,080 »
» 23-24 » » 363,240 »
Հոկտ. 13-31նոյ. 16,000 » 3,379,040 »

Գինքն ԵՆ ՈՍԿԻ. ՏՐԱՆԶ
Կէս ֆ. 1.25 ֆ. 2.50 ֆ. 4 ֆ. 5 ֆ. 6 ֆ. 7 ֆ. 8 ֆ. 9 ֆ. 10 ֆ. 11 ֆ. 12 ֆ. 13 ֆ. 14 ֆ. 15 ֆ. 16 ֆ. 17 ֆ. 18 ֆ. 19 ֆ. 20 ֆ. 21 ֆ. 22 ֆ. 23 ֆ. 24 ֆ. 25 ֆ. 26 ֆ. 27 ֆ. 28 ֆ. 29 ֆ. 30 ֆ. 31 ֆ. 32 ֆ. 33 ֆ. 34 ֆ. 35 ֆ. 36 ֆ. 37 ֆ. 38 ֆ. 39 ֆ. 40 ֆ. 41 ֆ. 42 ֆ. 43 ֆ. 44 ֆ. 45 ֆ. 46 ֆ. 47 ֆ. 48 ֆ. 49 ֆ. 50 ֆ. 51 ֆ. 52 ֆ. 53 ֆ. 54 ֆ. 55 ֆ. 56 ֆ. 57 ֆ. 58 ֆ. 59 ֆ. 60 ֆ. 61 ֆ. 62 ֆ. 63 ֆ. 64 ֆ. 65 ֆ. 66 ֆ. 67 ֆ. 68 ֆ. 69 ֆ. 70 ֆ. 71 ֆ. 72 ֆ. 73 ֆ. 74 ֆ. 75 ֆ. 76 ֆ. 77 ֆ. 78 ֆ. 79 ֆ. 80 ֆ. 81 ֆ. 82 ֆ. 83 ֆ. 84 ֆ. 85 ֆ. 86 ֆ. 87 ֆ. 88 ֆ. 89 ֆ. 90 ֆ. 91 ֆ. 92 ֆ. 93 ֆ. 94 ֆ. 95 ֆ. 96 ֆ. 97 ֆ. 98 ֆ. 99 ֆ. 100 ֆ. 101 ֆ. 102 ֆ. 103 ֆ. 104 ֆ. 105 ֆ. 106 ֆ. 107 ֆ. 108 ֆ. 109 ֆ. 110 ֆ. 111 ֆ. 112 ֆ. 113 ֆ. 114 ֆ. 115 ֆ. 116 ֆ. 117 ֆ. 118 ֆ. 119 ֆ. 120 ֆ. 121 ֆ. 122 ֆ. 123 ֆ. 124 ֆ. 125 ֆ. 126 ֆ. 127 ֆ. 128 ֆ. 129 ֆ. 130 ֆ. 131 ֆ. 132 ֆ. 133 ֆ. 134 ֆ. 135 ֆ. 136 ֆ. 137 ֆ. 138 ֆ. 139 ֆ. 140 ֆ. 141 ֆ. 142 ֆ. 143 ֆ. 144 ֆ. 145 ֆ. 146 ֆ. 147 ֆ. 148 ֆ. 149 ֆ. 150 ֆ. 151 ֆ. 152 ֆ. 153 ֆ. 154 ֆ. 155 ֆ. 156 ֆ. 157 ֆ. 158 ֆ. 159 ֆ. 160 ֆ. 161 ֆ. 162 ֆ. 163 ֆ. 164 ֆ. 165 ֆ. 166 ֆ. 167 ֆ. 168 ֆ. 169 ֆ. 170 ֆ. 171 ֆ. 172 ֆ. 173 ֆ. 174 ֆ. 175 ֆ. 176 ֆ. 177 ֆ. 178 ֆ. 179 ֆ. 180 ֆ. 181 ֆ. 182 ֆ. 183 ֆ. 184 ֆ. 185 ֆ. 186 ֆ. 187 ֆ. 188 ֆ. 189 ֆ. 190 ֆ. 191 ֆ. 192 ֆ. 193 ֆ. 194 ֆ. 195 ֆ. 196 ֆ. 197 ֆ. 198 ֆ. 199 ֆ. 200 ֆ. 201 ֆ. 202 ֆ. 203 ֆ. 204 ֆ. 205 ֆ. 206 ֆ. 207 ֆ. 208 ֆ. 209 ֆ. 210 ֆ. 211 ֆ. 212 ֆ. 213 ֆ. 214 ֆ. 215 ֆ. 216 ֆ. 217 ֆ. 218 ֆ. 219 ֆ. 220 ֆ. 221 ֆ. 222 ֆ. 223 ֆ. 224 ֆ. 225 ֆ. 226 ֆ. 227 ֆ. 228 ֆ. 229 ֆ. 230 ֆ. 231 ֆ. 232 ֆ. 233 ֆ. 234 ֆ. 235 ֆ. 236 ֆ. 237 ֆ. 238 ֆ. 239 ֆ. 240 ֆ. 241 ֆ. 242 ֆ. 243 ֆ. 244 ֆ. 245 ֆ. 246 ֆ. 247 ֆ. 248 ֆ. 249 ֆ. 250 ֆ. 251 ֆ. 252 ֆ. 253 ֆ. 254 ֆ. 255 ֆ. 256 ֆ. 257 ֆ. 258 ֆ. 259 ֆ. 260 ֆ. 261 ֆ. 262 ֆ. 263 ֆ. 264 ֆ. 265 ֆ. 266 ֆ. 267 ֆ. 268 ֆ. 269 ֆ. 270 ֆ. 271 ֆ. 272 ֆ. 273 ֆ. 274 ֆ. 275 ֆ. 276 ֆ. 277 ֆ. 278 ֆ. 279 ֆ. 280 ֆ. 281 ֆ. 282 ֆ. 283 ֆ. 284 ֆ. 285 ֆ. 286 ֆ. 287 ֆ. 288 ֆ. 289 ֆ. 290 ֆ. 291 ֆ. 292 ֆ. 293 ֆ. 294 ֆ. 295 ֆ. 296 ֆ. 297 ֆ. 298 ֆ. 299 ֆ. 300 ֆ. 301 ֆ. 302 ֆ. 303 ֆ. 304 ֆ. 305 ֆ. 306 ֆ. 307 ֆ. 308 ֆ. 309 ֆ. 310 ֆ. 311 ֆ. 312 ֆ. 313 ֆ. 314 ֆ. 315 ֆ. 316 ֆ. 317 ֆ. 318 ֆ. 319 ֆ. 320 ֆ. 321 ֆ. 322 ֆ. 323 ֆ. 324 ֆ. 325 ֆ. 326 ֆ. 327 ֆ. 328 ֆ. 329 ֆ. 330 ֆ. 331 ֆ. 332 ֆ. 333 ֆ. 334 ֆ. 335 ֆ. 336 ֆ. 337 ֆ. 338 ֆ. 339 ֆ. 340 ֆ. 341 ֆ. 342 ֆ. 343 ֆ. 344 ֆ. 345 ֆ. 346 ֆ. 347 ֆ. 348 ֆ. 349 ֆ. 350 ֆ. 351 ֆ. 352 ֆ. 353 ֆ. 354 ֆ. 355 ֆ. 356 ֆ. 357 ֆ. 358 ֆ. 359 ֆ. 360 ֆ. 361 ֆ. 362 ֆ. 363 ֆ. 364 ֆ. 365 ֆ. 366 ֆ. 367 ֆ. 368 ֆ. 369 ֆ. 370 ֆ. 371 ֆ. 372 ֆ. 373 ֆ. 374 ֆ. 375 ֆ. 376 ֆ. 377 ֆ. 378 ֆ. 379 ֆ. 380 ֆ. 381 ֆ. 382 ֆ. 383 ֆ. 384 ֆ. 385 ֆ. 386 ֆ. 387 ֆ. 388 ֆ. 389 ֆ. 390 ֆ. 391 ֆ. 392 ֆ. 393 ֆ. 394 ֆ. 395 ֆ. 396 ֆ. 397 ֆ. 398 ֆ. 399 ֆ. 400 ֆ. 401 ֆ. 402 ֆ. 403 ֆ. 404 ֆ. 405 ֆ. 406 ֆ. 407 ֆ. 408 ֆ. 409 ֆ. 410 ֆ. 411 ֆ. 412 ֆ. 413 ֆ. 414 ֆ. 415 ֆ. 416 ֆ. 417 ֆ. 418 ֆ. 419 ֆ. 420 ֆ. 421 ֆ. 422 ֆ. 423 ֆ. 424 ֆ. 425 ֆ. 426 ֆ. 427 ֆ. 428 ֆ. 429 ֆ. 430 ֆ. 431 ֆ. 432 ֆ. 433 ֆ. 434 ֆ. 435 ֆ. 436 ֆ. 437 ֆ. 438 ֆ. 439 ֆ. 440 ֆ. 441 ֆ. 442 ֆ. 443 ֆ. 444 ֆ. 445 ֆ. 446 ֆ. 447 ֆ. 448 ֆ. 449 ֆ. 450 ֆ. 451 ֆ. 452 ֆ. 453 ֆ. 454 ֆ. 455 ֆ. 456 ֆ. 457 ֆ. 458 ֆ. 459 ֆ. 460 ֆ. 461 ֆ. 462 ֆ. 463 ֆ. 464 ֆ. 465 ֆ. 466 ֆ. 467 ֆ. 468 ֆ. 469 ֆ. 470 ֆ. 471 ֆ. 472 ֆ. 473 ֆ. 474 ֆ. 475 ֆ. 476 ֆ. 477 ֆ. 478 ֆ. 479 ֆ. 480 ֆ. 481 ֆ. 482 ֆ. 483 ֆ. 484 ֆ. 485 ֆ. 486 ֆ. 487 ֆ. 488 ֆ. 489 ֆ. 490 ֆ. 491 ֆ. 492 ֆ. 493 ֆ. 494 ֆ. 495 ֆ. 496 ֆ. 497 ֆ. 498 ֆ. 499 ֆ. 500 ֆ. 501 ֆ. 502 ֆ. 503 ֆ. 504 ֆ. 505 ֆ. 506 ֆ. 507 ֆ. 508 ֆ. 509 ֆ. 510 ֆ. 511 ֆ. 512 ֆ. 513 ֆ. 514 ֆ. 515 ֆ. 516 ֆ. 517 ֆ. 518 ֆ. 519 ֆ. 520 ֆ. 521 ֆ. 522 ֆ. 523 ֆ. 524 ֆ. 525 ֆ. 526 ֆ. 527 ֆ. 528 ֆ. 529 ֆ. 530 ֆ. 531 ֆ. 532 ֆ. 533 ֆ. 534 ֆ. 535 ֆ. 536 ֆ. 537 ֆ. 538 ֆ. 539 ֆ. 540 ֆ. 541 ֆ. 542 ֆ. 543 ֆ. 544 ֆ. 545 ֆ. 546 ֆ. 547 ֆ. 548 ֆ. 549 ֆ. 550 ֆ. 551 ֆ. 552 ֆ. 553 ֆ. 554 ֆ. 555 ֆ. 556 ֆ. 557 ֆ. 558 ֆ. 559 ֆ. 560 ֆ. 561 ֆ. 562 ֆ. 563 ֆ. 564 ֆ. 565 ֆ. 566